ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գեղարքունիքի մարզ
գ. Բերդկունք
էլ. փոստ berdkunq.gegharquniq@mta.gov.am

# ՔԱՂՎԱԾՔ ՈՐՈՇՈՒՄԻՑ

«01» օգոստոսի 2017 թվականի թիվ 16

## ԲԵՐԴԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով համայնքի ավագանին որոշում է.

1. Կատարել փոփոխություն Բերդկունք համայնքի 2017թ.-ի բյուջեի եկամտային մասում:

2.«Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից վարձակալությամբ տրվող համայնքի տարածքում ոչ գյուղ.նշանակության պետական հողերի վարձավճարը սխալմամբ դրվել է համայնքի սեփականություն համարվող վարձակալությամբ տրված հողերի հաշվին: Հետևաբար համայնքի սեփականություն համարվող՝վարձակալությամբ տրված հողերի եկամտային մասից պակասեցնել 120.0 հազ. դրամ և ուղղել համայնքի տարածքում ոչ գյուղ.նշանակության պետական հողերի հաշվեհամարին ՝900175108399:

3. Հանձնարարել հաշվապահին կատարել համապատասխան փոփոխություն բյուջեի եկամտային մասում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԲԿԵՆ ԴԱԴԻԿՅԱՆ